«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վրա

Հետազոտող ուսուցիչ՝ Արփենիկ Կարապետյան

Դպրոց՝ Փշարավանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 10

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 15

ԱՄՓՈՓՈՒՄ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 18

ՆԱԽԱԲԱՆ

«Արդյունավետ հետադարձ կապն ավելի կարևոր է, քան ուսուցումը»

Բիլ Գեյթս

Հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրման առարկա ենք դարձրել հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վրա թեման, որի շրջանակներում փորձել ենք վեր հանել հետադարձ կապի կարևորության ու դրա դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կիրառման ազդեցությունն ու արդյունավետությունը սովորի առաջադիմության վրա:

Թեմայի արդիականությունը. Թերևս հնարավոր չէ ժխտել այն մոտեցումը, որ կրթության ճիշտ և արդյունավետ կազմակերպումից է կախված կայուն ու զարգացած հասարակության գոյությունը: Ըստ այդմ, կրթության մեթոդների և դրանց կատարելագործման ուղիների որոնման անհրաժեշտությունը մշտապես առկա է, ուստի նման թեմաների դիտարկումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում, հետևաբար արդիական է:

Հետադարձ կապի կիրառումն իրականում կարևոր և անհրաժեշտ գործիք է ոչ միայն կրթության որակի բարձրացման, այլև ցանկացած հարցում կատարված աշխատանքների արդյունքների գնահատման առումներով:

Կրթության տրամադրման արդյունավետ մեթոդների կիրառումն իրապես չափազանց կարևոր է, սակայն բոլոր այն դեպքերում, երբ մատուցվող նյութի ներկայացումն իրականացվում է առկա մեթոդներից ամենաարդյունավետ տարբերակի կիրառմամբ, սակայն չի ապահովվում հետադարձ կապը, ընդհանուր արդյունքի և սահմանված նպատակի իրացվելիության տեսանկյունից կարող են առաջ գալ մի շարք մտահոգություններ:

Ըստ այդմ, կարևոր ենք համարում դիտարկել հետադարձ կապի կիրառման արդյունավետության գնահատում սովորողի առաջադիմության բարձրացման համատեքստում:

Գտնում ենք, որ հետադարձ կապի կիրառման, դրա առանձնահատկությունների և արդյունավետության վերհանման արդյունքում կրթության կազմակերպման մի շարք հարցեր կստանան իրենց համարժեք պատասխաններն ու լուծումները:

Հետազոտության խնդիրը և նպատակը. Հետազոտական աշխատանքի իրականացմամբ մեր առջև դրված գլխավոր խնդիրը հանգում է հետադարձ կապի ազդեցության գնահատմանը սովորողի առաջադիմության վրա, մեր առջև դրված խնդիրն է բացահայտել հետադարձ կապի ազդեցությունը և իրականացնել դրա գնահատում տարբեր տեսանկյուններից:

Վերոնշյալ խնդրի իրականացմամբ մենք նպատակ ենք հետապնդում վեր հանել ուսուցման գործընթացում հետադարձ կապի կարևորությունն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև առարկայական ձևով ներկայացնել այն հիմնական առավելությունները, որոնք կդրսևորվեն հետադարձ կապի կիրառման արդյունքում՝ նպաստելով սովորողի առաջադիմության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարկ ենք համարում նշել, որ հետադարձ կապի կիրառման, դրա ազդեցության գնահատման վերաբերյալ տեսական գրականության շրջանակներում առկա են որոշ մոտեցումներ, մասնավորապես, խնդրո առարկայի վերաբերյալ մեր կողմից ուսումնասիրվել են հետևյալ աղբյուրները.

- «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի որակի ապահովման բաժնի կողմից կազմված Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները,
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն և մեխանիզմներ,
- Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Ուսուցման արդյունավետ հնարներ,
- Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ:

Ուսումնասիրության իրականացման ընթացքում օգտվել ենք նաև մի շարք համացանցային աղբյուրներից, որոնք կներկայացվեն գրականության ցանկում:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սվորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը:

Այսպիսով՝ հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու

հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից (Բալայան Ա., 2021):

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման սկզբունքն է՝ <<Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա»:

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի վիճակի ճիշտ հայտորոշմամբ: Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում սովորողի ձեռք բերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Հայտորոշման արդյունքում կիրառվող հետադարձ կապը նպաստում է ունեցած տեղեկության հիման վրա սովորողի վիճակին ուսուցման կազմակերպման բարելավմանը: Այն շարունակական ևանընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների (միավորային և ուսուցանող) արդյունքներ իքննարկման միջոցով: Սովորողին տրամադրվող հետադարձ կապը պետք է լինի հստակ, հասկանալի, ուղղորդող և ուղղակիորեն կապված լինի իր ուսումնառության հաջորդ քայլերի հետ (Առաքելյան Մ., 2019):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ինչպես արդեն պարզ դարձավ, ուսուցման գործընթացում կիրառվող հետադարձ կապի էությունը կայանում է ներկայացված թեմայի վերաբերյալ աշակերտների ստացած գիտելիքների, պատկերացումների, գաղափարների վերհանմանը, այլ կերպ ասած՝ հետադարձ կապի կիրառման արդյունքում է ուսուցիչը պարզում՝ որքանով է աշակերտն ընկալել իրեն մատուցված նյութը և որքանով է ընկալել այնպես, ինչպես իրականում անհրաժեշտ է, այսինքն՝ այն բացահայտում է նաև մատուցված նյութի ընկալման համապատասխան աստիճանը:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ - սովորող, սովորող - ուսուցիչ կամ սովորող - սովորող կապերը: Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլուծություններ՝ փոխադարձաբար անդրադառնալով աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին:

Ներքին հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ե՛վ ուսուցիչը, և՛ սովորողը կարիք ունեն ինքնաանդրադարձ վերլուծության: Ուսուցիչը ստացված արդյունքները վերլուծելով՝ բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը, դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները, իսկ աշակերտը իր գործողությունները վերլուծելով՝ բարելավում է իր ուսումնառությունը:

Հետադարձ կապի իրականացման միջոցները

Բանավոր զրույց. երբ վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջոցով: Հարցուպատասխանի, տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք

ունեն, ինչու չէ, նաև հնարավոր է նորից ընկերների կամ ուսուցչի օգնությամբ անդրադառնալ այն կետերին, որոնք կօգնեն վերացնել աշխատանքի թերությունները:

Գրավոր մեկնաբանություն. երբ վերլուծություններն ու բարելավման առաջարկներն իրականացվում են գրավոր կերպով:

Գծապատկերներ. երբ ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով: Այս միջոցը բարձրացնում է տեղեկատվության յուրացման արդյունավետությունը, քանի որ ուսուցչի՝ սովորողին կամ սովորողներին ուղղված խոսքը ուղեկցվում է նշաններով և գծանկարներով, որոնք կարող են լինել նախապես պայմանավորված նշաններ, սիմվոլներ, հուշող պատկերներ և այլն:

Տեսագրություն և ձայնային հաղորդագրություն. երբ որակյալ տեսագրությամբ կամ ձայնագրությամբ կարճ և դիպուկ վերլուծություն կամ մեկնաբանություն է տրվում աշխատանքին:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն արդեն անդառնալի կերպով մուտք են գործել ուսուցման բոլոր գործընթացներ, հետևաբար այս հնարավորությունը նույնպես պետք է օգտագործել արդյունավետորեն: Տեղեկույթը, վերլուծությունները սովորողի համար դառնում են ավելի հետաքրքիր և արդիական, երբ իրենց հետ շփվում են, այսպես կոչված՝ «ընդունելի միջոցներով»:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար անհարժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները:

Անհատական. երբ սովորողը հասկանում է, որ ուղղորդող և շտկող հարցերն ուղղված են հենց իրեն, այլ ոչ ամբողջ դասարանին: Սովորողը հասկանում է, որ հարցադրումները և ուղղորդումը չեն կրում ձևական բնույթ, այլ իրականացվում են հենց իր համար:

Օբյեկտիվ և նրբանկատ. հետադարձ կապի միջոցով պետք է մանրամասն նկարագրել սովորողի գործողությունները և բացառել հուզական գնահատականը նրա

կատարած քայլերին: Սովորողի համար բավականին տհաճ է և տեղին չէ, երբ իրեն քննադատում կամ պարսավում են այս կամ այն սխալի համար: Բայց եթե նրա նկատմամբ օբյեկտիվ են, այսինքն՝ վերլուծում են իր աշխատանքը, այլ ոչ թե իրեն՝ մեղադրում կամ հեգնում, նա դրական և պատրաստակամ է մոտենում վերլուծական աշխատանքին:

Պատճառներ և բացատրություն. սովորողի կատարած քայլերի վերլուծությունը (ոչ թե ուղղումը), թույլ է տալիս նրան ինքնուրույն հասկանալ և շտկել իր կատարած բացթողումները: Հետադարձ կապն ամբողջովին կրում է ուսուցանող բնույթ, ուստի կարևոր է ոչ թե ուղիղ ձևով սովորողին իր սխալները ցույց տալը, այլ հարցերի և պարզաբանումների միջոցով նրան օգնելը, որ դրանք ինքնուրույն գտնի:

Ճիշտ տեղին և ժամանակին. հետադարձ կապը պետք է տալ այն ժամանակ, երբ հարցերի ճշգրտումը տեղին է և ժամանակին: Այս սկզբունքի իմաստը հետադարձ կապի ժամանակավրեպ չլինելու մասին է: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա սովորողին ժամանակին իր սխալները գտնելու և շտկելու, քանի դեռ նա ամբողջովին գործընթացի մեջ կենտրոնացած է: Ինչպես ասում են՝ երկաթը տաք-տաք են ծեծում:

Մոտիվացիայի ապահովում. հետադարձ կապի մեջ պետք է շեշտադրել սովորողի ձեռքբերումները՝ դրանով ապահովելով նրա դրական տրամադրվածությունը և կենտրոնացվածությունը աշխատանքի վերլուծության վրա:

Կարճ և հետաքրքիր. յուրաքանչյուր սխալի համար տրամադրել կարճ տեղեկություն՝ համեմելով խաղային կամ այլ հետաքրքիր տարրերով (Բալայան Ա., 2021):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Աշխատանքի այս հատվածում ցանկանում ենք ներկայացնել այն հնարներն ու մեթոդները, որոնք մեր կողմից դիտարկվել են հետադարձ կապի կիրարկման ընթացքում:

Արդյունավետ հետադարձ կապի հնարներ

Հնար 1. «Սենդվիչ»

- Խոսքը սկսվում է դրական արտահայտություններով, երբ նշվում են աշխատանքի դրական կողմերը, սովորողը դառնում է ավելի բաց և ընդունող իրեն ուղղված հետադարձ կապին:

- Խոսքի մեջտեղում անհրաժեշտ է անդրադառնալ սովորողի կատարած այն քայլերին, որոնց շուրջ նա պետք է աշխատի և բարելավի արդյունքները:

- Վերջում ավարտել խոսքը մոտիվացնող մտքերով, օրինակ՝ ես վստահ եմ, որ դու կկարողանաս մեր վերլուծությունից հետո ինքնուրույն ուղղել աշխատանքդ: Այս դեպքում սովորողը կունենա դրական տրամադրվածություն:

Հնար 2. «Չափանիշներ, սխալներ, արդյունք»

Հետադարձ կապի սկզբում հիշեցնել այն կանոնը կամ չափանիշը, որին կարևոր էր հետևել առաջադրանքը կատարելիս և դա չկիրառելու պատճառով սովորողը թույլ է տվել սխալներ: Այնուհետև մեկնաբանել, թե որտեղ է նա խախտել կանոնը: Սովորողի հետ քննարկել, թե ինչպես է կանոնի կամ չափանիշների կիրառումն ազդում արդյունքի վրա: Այդ տեղեկատվության շնորհիվ սովորողը հասկանում է, թե ինչը պետք է փոխի և ինչու:

Հնար 3. «Ձեռքբերում, ուսումնառություն, փոփոխություն»

Հետադարձ կապի սկզբում ուսուցիչը սովորողին տեղեկացնում է նրա ձեռքբերումների մասին: Միասին քննարկելով՝ որոշում են, թե սովորողը որտեղ է թույլ տվել բացթողումներ: Վերլուծության և քննարկման միջոցով գտնում են ցանկալի արդյունքի ուղիները: Սովորողը կատարում է համապատասխան փոփոխությունները և ճշգրտում իր քայլերը:

Այս բոլոր հնարները կարելի է ոչ միայն կիրառել ուսուցիչ – սովորող կապում այլ նաև կարելի է պարզեցնել և հարմարեցնել սովորող – սովորող համագործակցության համար: Նշենք այն անհերքելի միտքը, որ սովորում է նա, ով սովորեցնում է: Հետևաբար, արդյունավետ հետադարձ կապ անհրաժեշտ է ապահովել նաև սովորողների միջև:

Հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն համապատասխանում է հետևյալ երեք կանոններին.

Ընկալում. երբ սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին:

Ընդունում. երբ սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրանց հետ:

Հեռանկար. երբ սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Ընդհանրացնելով կարող ենք ավելացնել, որ հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Շատ կարևոր է որ սովորողն իրեն հարգված և կարևորված զգա, հասկանա, որ իր կրթությունը ձևական բնույթ չի կրում (Բալայան Ա., 2021):

Հիմք ընդունելով վերոնշյալ հնարները, ինչպես նաև ցանկանալով հստակ պատկերացում կազմել դրանց արդյունավետության, գործնական կիրառության հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ՝ դրանք կիրառել ենք մեր դասընթացների իրականացման ընթացքում, որի արդյունքում ստացել են հետևյալ պատկերը.

Դասի պլան.

Մաթեմատիկայի ուսուցումը 10-րդ դասարանում

Թեմա՝ Իրական թվի իռացիոնալ ցուցիչով աստիճանը

Դասի տեսակը՝ գիտելիքների ստուգում հետադարձ կապի միջոցով

Դասի նպատակը՝ վեր հանել նախորդ դասի ընթացքում ներկայացված նյութի ընկալվածության աստիճանը,

Կիրառվող հանձնարարություններ՝

1. Յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է ներկայացնել նախորդ դասաժամին մատուցված թեմայի այն մասը, որը տպավորվել է

2. Հիմնավորել, թե ինչու է կոնկրետ այդ հատվածը տպավորվել,

3. Բացահայտել՝ արդյոք թեմայից կոնկրետ հատվածի տպավորվելը պայմանավորված է ուսուցչի բացատրելու ձևից,

4. Յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է անկեղծանալ թեմայի հետաքրքիր լինել/չլինելու վերաբերյալ՝ 0-10 բալանոց սանդղակով գնահատելով այն

5. Աշակերտների կողմից ստանալ հստակ հիմնավորումներ դասի հետաքրքրության վերաբերյալ իրենց կողմից տրված գնահատականի վերաբերյալ,

6. Աշակերտներից յուրաքանչյուրին խնդրել թեման ներկայացնել՝ հանդես գալով ուսուցչի դերում,

7. Աշակերտներից յուրաքանչյուրից ստանալ հստակ պատասխաններ առ այն, թե թեման ինչ տվեց իրենց և ինչ փոխվեց իրենց կյանքում խնդրո առարկայի իմացությունը:

Վերոնշյալ՝ ոչ սովորական պլանով կազմված դասաժամը, մեր դիտարկմամբ, հետադարձ կապի կիրառման մեթոդ է, որի շնորհիվ հնարավոր է բացահայտել այնպիսի կարևոր հանգամանքներ, ինչպիսիք են աշակերտների կողմից դասի ընկալելու աստիճանը, նյութի ներկայացման այն մեթոդները, որոնք ունեն ընկալվածության առավել բարձր աստիճան:

Որպես հետադարձ կապի դրսևորման լավագույն տարբերակ՝ մեր կողմից դիտարկվել է նախորդ դասաժամերի ընթացքում յուրացրած թեմաների վերաբերյալ գիտելիքների առկայության ստուգումը, որի համար մեր կողմից աշակերտներին հանձնարարվել են առաջադրանքներ՝ ներկայացնել նախորդ հինգ դասերի ընթացքում անցած թեմաները: Հանձնարարված խնդրի արդյունքում աշակերտների կատարած աշխատանքներն ունեցել են հետևյալ պատկերը.

1. Աշակերտներից մեկը նշել էր միայն թեմաների անունները, մասնավորապես՝ մեջբերում. «Նախորդ հինգ դասերի ընթացքում անցել ենք տոկոսներ, համաչափություն, դիագրամներ թեմաները»:
2. Աշակերտներից մյուսը բավականին հանգամանալից ներկայացրել էր նախորդ դասաժամերին անցած թեմաների հիմնական և առանցքային մասերը:
3. Աշակերտներից ոմանք դժվարացել էին ամբողջությամբ հիշել նույնիսկ անցած թեմաների վերտառությունները:

Որպես վերոնշյալ հնարի կիրառման առավելություն կարող ենք նշել այն, որ աշակերտները, իմանալով, որ ժամանակ առ ժամանակ կիրառվելու է նման գործիքակազմ, անընդհատ կկրկնեն նախորդ դասերը, ինչն էլ առավել արդյունավետ կդարձնի ուսուցման գործընթացը:

Մեր դիտարկմամբ՝ հետադարձ կապի դրսևորման յուրօրինակ մոտեցում է նաև յուրաքաչյուր դասարանի տվյալ առարկայի վերաբերյալ ընդհանուր էլեկտրոնային խմբի ստեղծումը, քանի որ տվյալ ժամանակաշրջանում համացանց ու իր հնարավորությունները ներթափանցել են մեր իրականությունը, իսկ երիտասարդ սերունդն ավելի մեծ հետաքրքրությամբ է ներգրավվում այդ գործընթացին, ուստի կարևոր ենք համարում նաև համացանցային հնարավորությունների կիրառումը: Ընդհանուր խմբի շրջանակներում հնարավոր է դասերից հետո ևս պահպանել հետադարձ կապը և դասերի ընթացքում քննարկված թեմաների մասին զրուցել նաև էլեկտրոնային հարթակում: Ճիշտ է, այս գործառույթը կարող է լրացուցիչ ծանրաբեռնել ուսուցչին, սակայն կարևոր և արդյունավետ ազդեցություն կունենա ուսուցման գործընթացի վրա:

Ամփոփելով հետազոտության ընթացքի շրջանակներում ներկայացված մոտեցումները՝ կարող ենք նշել, որ ուսուցման գործընթացի շրջանակներում որպես հետադարձ կապի ապահովման մի շարք մեխանիզմներ են մշակվել և կիրառվել, բայց քանի որ ուսուցման գործընթացը դինամիկ երևույթ է, դրա շրջանակներում կիրառվող գործիքակազմը ևս պետք է դինամիկ բնույթ կրի և ժամանակ առ ժամանակ վերանայվի ու համալրվի նոր՝ ժամանակին և մարտահրավերներին համահունչ մոտեցումներով:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված գաղափարների արդյունքում կարող ենք նշել, որ հետադարձ կապի կիրառումը մի շարք դեպքերում բարձրացնում է ուսուցման գործընթացի իրականացման արդյունավետությունը, ուստի դրա կիրառումը պետք է դարձնել ուսուցման գործընթացի անբաժանելի տարր:

Հետադարձ կապի կիրառման արդյունքում աշակերտները մշտապես գտնվում են առավել պատասխանատու իրենց հանձնարարված դասերի սերտման հարցում, քանի որ սովորում են ոչ թե մեկ օրվա, այլ ավելի երկար ժամանակահատվածի համար:

Հետադարձ կապի դրսևորումը զգոն է պահում նաև ուսուցչին, քանի որ վերջինս պարտավորվում է դասը վարել այնպես, որ որպես հետադարձ կապի դրսևորում ստանա միայն դրական և հետաքրքիր արձագանքներ, քանի որ հետադարձ կապը նաև ուսուցչի վարած դասի վերաբերյալ կարծիք է, իսկ երբ այդ կարծիքների հավաքագրման գործընթացն իրականացվում է անանուն, առավել մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը դասը բարձր որակով վարելու մասով:

Հետաքրքիր է նշել նաև, որ հետադարձ կապի կիրառման վերաբերյալ դրական են արտահայտվել այն բոլոր աշակերտները, որոնց դասի ընթացքում կիրառվել է հետադարձ կապի դրսևորման տարբեր գործիքներ, ինչը խոսում է այն մասին, որ կիրառված գործիքակազմը դրական է և արդյունավետ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ հետադարձ կապի կիրառման արդյունքում փոխվում է աշակերտների մոտեցումն ու ընկալումը դասընթացների վերաբերյալ: Մասնավորապես, երբ մենք շեշտը դնում ենք միայն գնահատականի և տվյալ օրը դասը լավ պատասխանելու վրա, աշակերտները սկսում են դասընթացն ընկալել զուտ որպես հաջորդ դասին պատասխանելու և գնահատական ստանալու միջոց, սակայն երբ կարևորվում է հետադարձ կապի դասընթացի վերաբերյալ, աշակերտները սկսում են դասընթացը դիտարկել որպես մի երևույթ, որը պետք է ուսումնասիրել և սերտել

այնքան խորությամբ, որ դրա արդյունքում ստացված գիտելիքները հետագայում ևս հնարավոր լինի կիրառել:

Գտնում ենք, որ վերոնշյալ մոտեցումը մեծապես բարձրացնում է հետադարձ կապի կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

- Հետադարձ կապի կիրառումը մեծապես կարող է բարձրացնել սովորողի առաջադիմությունը, ուստի այն պետք է կիրառել ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրի կիրառմանը զուգահեռ:
- Սովորողի առաջադիմությունը մեծապես կախված է ոչ թե նրանից, թե ինչպես է պատասխանում տվյալ օրվա դասին, այլ նրանից, թե ինչպես է պատասխանում նախորդ օրերի դասերի վերաբերյալ տրված հարցերին, որոնք էլ հետադարձ կապի կիրառման արդյունքում են դրսևորվում:
- Սովորողի առաջադիմությունը մեծապես աճում է, երբ փոխվում է աշակերտի մոտեցումն ու ընկալումը դասընթացի վերաբերյալ, մասնավորապես, երբ դասընթացը սկսվում է դիտարկվել ոչ թե գնահատական ստանալու միջոց, այլ գիտելիքներ ձեռք բերելու և դրանք ապագայում կիրառելու լավագույն հնարավորություն:
- Ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր դրական և արդյունավետ դրսևորումները, սակայն դրանցից յուրաքանչյուրի կիրառմանը զուգահեռ հետադարձ կապի կիրարկումը մեծապես կբարձրացնի սովորողի առաջադիմությունը՝ ապահովելով առավել կրթված, բանիմաց և խելամիտ անհատների առկայություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Մ., ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները, https://znanio.ru/media/metodika-2627565
2. Բալայան Ա., Հետադարձ կապ, Երևան, 2021 https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_30.html
3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն և մեխանիզմներ, Երևան, 2015,
4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, /խառը, համակցված ուսուցման համար/, «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի որակի ապահովման բաժին,
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008
6. Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2020